

ԳՐԱԴՐՈՍԱԿԱՆ

ՀԱՍԱՌՈՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՔԵՐԱԿԱՆԻ ՅՈՎ ՀԱՆՆԷՍ ԾՈՐԾՈՐԵՑԻ

Քերականական հայերէն երկերու ան-
խոնջ ուսումնասիրող և հրատարակող
Պրոֆ. Լևոն Գ. Սաչերեան ի լոյս հանեց
նաև Ծործորեցի Յովհաննէս Վարդապետի
աշխատութիւնը, «Համառօտ Տեսութիւն
Քերականի», (Լոս Անճէլէս, 1984):

Գիրքը կը բաղկանայ 382 էջերէ, հե-
տեւեալ բովանդակութեամբ: Երկու Խօսք,
Եփրեմ Եպօ. Թապաղեանի (էջ 7-9):
«Աշխատասիրողի կողմից» (11-12): Նե-
րածութիւն (15-108): Համառօտ Տեսու-
թիւն Քերականի, «Բնական Բնագիր»
(111-327): «Synopsis», անդերէն (331-
348): Ծանօթութիւններ, 1-68 (351-362):
Բառացանկ քերականական տերմինների և
դժուարիմաց բառերի (363-374): Յանկ
Անձնանունների և Տեղանունների (375-
376): Յանկ օգտագործուած մատենագրու-
թեան (377-379): Բովանդակութիւն (381):

Յովհաննէս Ծործորեցիի այս երկէն
կարևոր օրինակ մը կը դասուի Ս. Յակոբ-
եանց թիւ 1257 Ժողովածոյին մէջ (էջ
357-464) գրուած Անապատ Ուխտ, 1322ին:
Չեռագրիս կազմին նորոգութեան ժամա-
նակ պրակներէն մէկը շիտակ չէ դրուած
դժբախտաբար: Սոյն ձեռագրի լուսանցք-
ներուն վրայ տեղտեղ կը գտնուին ման-
րատառ հակիրճ լուծմունքներ ևս: Թերևս
աւելորդ չըլլայ արձանագրել այստեղ
քանի մը նկատուածութիւններ Ծործորեցիի
երկին ներկայ հրատարակութեան առթիւ:

1. - էջ 107, ծածկագիր, «ԳՏԵՆՄԾ
ԲԳՍ»: - վերձանունով վարդերես:
2. - էջ 118, տող 1. - «յորջորջեր»:
- Թիւ 1257 ձեռագրին մէջ, էջ 362, տող
վերէն 3, մէկը, իբրև թէ սրբագրելով,
ըրած է «յորջորջիւր»:
3. - էջ 118, տող 2. - «Մեկէսածին»:
- Թիւ 1257, ստորին լուսանցքին ման-
րատառ լուծմունք. «Մեկլէն ի յոյն մեղր
ստէ, և վասն քաղցր և ախորժ վարդա-

պետութեան և յորդառատ Մեկէսածին
ստէ» (էջ 362):

4. - էջ 143, տող 16. - «որոյ է
նմանել» - Թիւ 1257 ձեռագիրը ունի,
«որոյ՞պարտ է նմանել» (էջ 400):

5. - էջ 147, տող 18. - «Զբանն ա-
ռաջին զոր արար» - Ճիշդը, «Զբանն
ստաջին զոր արարի» (Գործք Առաքելոց,
Ղուկայ Աւետարանչի, Գլ. Ա., համար 1):

6. - էջ 153, տող 16. - «Յաղագս
կիտից», տարբերակները, «կիտից վասն»,
«վասն կիտից» - Թիւ 1257 ձեռագիրը
ունի «կէտից վասն» (էջ 407):

7. - էջ 177, տող 13. - «Ինձ», տար-
բերակ «Ինձ», որ ճիշդն է, քանի որ
Ծործորեցիին իբր օրինակ թուած բառե-
րուն մէջ նախորդ բառը խոզ կը վերջա-
նայ և յաջորդ բառը՝ կով, ըստ այրու-
բնական կարգի:

8. - էջ 187, տող 4. - «Ե՛կ այսր:
Արդ՞ զի ո՛չ ևս դու այժմ պատճառք» -
Թիւ 1257 ձեռագիրը ունի աւելի ուշիղ
ձևով. «Ե՛կ այսր արդ՞ զի ո՛չ ևս դու
այժմ պատճառք» (էջ 376):

9. - էջ 199, տող 13. - «Ի տնկեաց»,
տարբերակ, «Ի տնկոց», որ նախընտրելի
է անտարակոյս:

10. - էջ 201, տող 10-11. - «Երկիր
և որ ինչ միանգամ: Ուղղական անուան
նշանակիչ գոյի, իսկ անանցականն...»:
- Թիւ 1257 ունի աւելի ճիշդ ընթերցում.
«Երկիր, և որ ինչ միանգամ ուղղական
անուն է նշանակիչ գոյի: իսկ անանցա-
կանն...» (էջ 384):

11. - էջ 212, տող 7. - «Եւ աղքատ
գոլով՝ փարթամ երեկցայց» - Վերջին
բառը ուղղիւի կը թուի ըստ խօսքին շա-
րադատութեան, ինչպէս կը տեսնենք էջ
225, տող 7. «Եւ աղքատ գոլով փարթամ
երեկոյ»:

12. - էջ 260. - Թիւ 1257 ձեռագիրը
լուսանցքի վրայ լուծմունք մը ունի,
լծորդութեանց վերջաւորութեան. «Գ գիր
միայն մնաց յամէն այբնիցն որ չէառ ի
լծորդութիւնս. յ, վ, ը, ի» (էջ 437):

13. - էջ 315, տող 2-4. - «Եւ խո-
նարհիլ զիջմամբ ի յիշմն ըստ իս: Թի-
շեպիբ խնկեալ բուրուառաւ կամաց սըր-
բոցն աղաւթիւք առաջի փառացն աթոռոյ

ԾՆՆԴԵԱՆ ԴԱՐԱԴԱՐԱՂ ԵՐԵՔ ՎԱՂԱՍԵՌԻԿ ՔԵՐԹՈՂՆԵՐՈՒ

Քառորդ դար առաջ, գրական յոդուածի մը մէջ, «Յորելահաններու սիրահարը անուանած էի մեր ժողովուրդը, երբ, հայրենիքէն ներս ու մանաւանդ դուրս, տեղի-անտեղի իրենց պանթէոններու վեհութեանէն կրկէս կ'իջնցնէր մեր գրական տիրանները, անոնց ծննդեան կամ մահուան 65, 85, 110 կամ 130 և այլ անհեթեթ ամիակներու առիթով, անոնց ներքոն ու գրուածքը հիւտելու էլիւք դարձած ատեն նախադասութիւններով, Յօդուածս կը կնքէի հետեւեալ տողերով. «Թողունք մեր իմացական աշխարհի փառքերը իրենց անքոյթ ու արժանաւայել բարձրութեան վրայ ու չիջնցնենք զանոնք հրապարակ անտեղիորէն ու այսքան արագօրէն: Որպէսզի, համեմատական տեւողութենէ մը ետք, անոնց խօսքը դառնայ աւելի յատակ ու հասու, անոնց պատգամը՝ աւելի վեհմ ու մեծիմաստ»:

Այսօր, փնտռել սկսած ենք այդ օրերը, երբ, զգնա մեռիք, կհուր սիրեմ՝ ժողովրդային ասացուածքին հաւատարիմ, դէժ գիտէինք յետ մահու արժանաւոր յարգանքը մատուցանել մեր մշակոյթի

վաստակաւորներուն: Ու մէկ ծայրայեղութենէն միւսին անցած ենք անհաւատալի արագութեամբ: Ու քանի մը կարկառուն դէմքերէ զատ, մոռացութեան տրուած են երկրորդական գրագէտներ, որոնց զլացուեցաւ կեանքը իր լիութեամբը վայելելու բարիքն ու շնորհը, շնորհիւ անգութ թուրքին կամ նոյնքան անգութ թոքախտին: (Յօսք շունիմ կուսակցական կամ խնամիական հաշիւներով կազմակերպուած յորելահաններուն, ուր որչազապարարանութեան մը մուսնտիկներ անձանիերու պանթէոնը կ'առաջնորդուին, շուտ քերուլու՝ չափ մեր իրաւ գրողներուն հետ):

Տարույս ընթացքին, արեւմտեան աշխարհը երբ մեծ շուքով նշեց ծննդեան 300ամեակը դասական երաժշտութեան գազաթներէն Գերմանացի Պախիւն և կէս-Գերմանացի կէս-Անգլիացի Հէնտէլին, չմոռցաւ նաև նշել Յօրելահանը նոյն այդ 1685ին աշխարհ եկած իտալացի Սքարլաթթիին, կակտակ որ այս վերջինը չէր համարուած ձայնանիշերու աշխարհի տիրաններէն: Ի՞նչ ըսել ուրեմն մեր ժողովուրդին, երբ թէքէեանը, վարուժանը կամ Սիամանթոն փառաւորելու տոհմ, ստուերի մէջ կը թողու Մեծարհնցը, Ռ. Սևակը, Տէրեանը և այլ ըսողմ առաջեակները մեր մշակոյթին: Ու ժաման որ այս երեքը մուսնեցան պատեհութիւնը իմացական բարձունքներուն մատչելու, իրենց կեանքի թելին անժամանակ փրթու մին հետեանքով:

Յետոյ, պահանջուածը ամէն անհատ ծառայութիւնն է իր կարողութեան սահմանէն ներս: Յիշեալ երեքը արժեարեցիմ իրենց տրուած քանքարները, և նոյն կեցուածքը պէտք է պահուէր անոնց ալ նկատմամբ: Աւետարանի (Ղուկաս, փՔ.) մեասնեորու առակին մէջ, Քրիստոս նոյն գովասանքն ու վարձատրութիւնը ըբաւթէ՛ 10 և թէ՛ 5 քանքար վաստկած ծառաներուն, առանց պահանջելու երկու քանքար ստացուէն նոյն արդիւնքը, ինչ որ կը ուղաւէր առաւելագոյնը ռազացէն: Վերջապէս, շորուն որ շատ է արուած, անկէ շատ կը պահանջուի իտօքը մրի

գառինն չ[ե]նլայ ... : — Վերոգրեալ յիշատակարանային տողերը կան թիւ 1257 ձեռագրին մէջ. «Եւ խոնարհել զիջմամբ ի յիշումն ըտախ [նրանտախոյ] : — Յիշեսւլիբ խնկեալ բուրժառօ կամայ սրբոցն աղօթիւք, առաջի փառացն աթոռոյ՝ գառինն զենլայ ... » (էջ 459):

14. — էջ 319, տող 9. — «Ընդհալացնէ. — Ըստ երևոյթիմ տպագրական վրիպակ է. թիւ 1257 ձեռագրիբը ունի ճիշդ ընթերցում. «Ընդհալացնէ» (էջ 461):

15. — էջ 351, ծնթ. 2. — Սբերը ... Սպիտ արգին էր. — կարդալ՝ «Սբերը ... Սաղայի արգին էր» (Հմմտ. Մննդոց, Ժ. 24):

Շնորհակալութեան արժանի է ԳրոՔ. Լ. Գ. Խաչերեան, որ, քանջալան աշխատանքով, ժիջեալարեան հայ հեղինակներէն Մարտիրոսի երկն ալ մտաշելի գարնաուց հայագիտութեամբ պարապօղ բանաստեղծներուն:

Ն. ԱՐՔ. ՄՈՎԱԿԱՆ